

Բ Ա Ձ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն

ՀԱՏՈՐ ԽԴ. ՊՐԱԿ Բ.

1886

ԱՊՐԵԼ, ՄԱՅԻՍ, ՅՈՒՆԻՍ

ՀԱՆԴԻՍ ՀԱՅԿԱԿԱՆ

ՂՐԻՄՈՒ ՄԷՋ ՍՈՒՏԱՂԻ ՀՈՎԷՏԸ

ՆԻ ՆՈՐՈԳ ՕԾԵՍԼ ՀԱՅՈՑ-ԿԱԹՈԼԻԿԱՅ ԱՍՏՈՒԱԾԱՄՈՐ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Ղրիմու հարաւային ափանց վրայ, 'ի թէոգոսիոյ ՅԱՎԵՐԱՌ ԳԷՂ յարեմուտք, աշխարհագրական լայնութեան 45° 51' և երկայնութեան աստիճանաց 42° 36' ներքև, դեռ ևս նախատիպ գեղեցկութեամբ կը փայլի փոքրիկ աւանն Սուտաղ: Բնութիւնն առատ ձեռքով զարդարել է զնա խիտ առ խիտ անտառներով, գոյնզգոյն լեռներով և ժայռերով, յորոց ոմանք ծածկուած են հարուստ բուսականութեամբ, և այլը ոմանք կանգնած են մերկ և ապալեր:

Սուտաղի ստորին մասը և կամ հովիտը՝ ճոխացեալ է զանազան տեսակ պտղատու ծառերով, որոց մէջ նշանաւոր են հսկայաբերձ ընկուզենիք. ընդ երկայնութիւն հովտիս տարածուած են այգեստանք, որոց չորս կողմէն կամ բառնան բրգաձև բարձր. ամէնը մէկ տեղ՝ դեղեցիկ և հիանալի տեսարան կ'ընծայի աչաց: Այգիք մեծ հարստութիւն և պարծանք են Սուտաղի: Հովիտըս կ'ամբիօրէ իւր մէջ 2,000,000էն ա.

ՊՐԱԿ Բ.

ւելի խաղողի որթեր, որք գինեշատ տարիները 600,000 մար կամ չափ գինի կու տան:

Անպատասպար ծովափունք՝ ուր շարաթը երկու անգամ միայն կը հանդիպին շոգենաւք ֆուս ընկերութեան, և այն՝ եթէ օդը ներէ. ցամաք և անհարթ ճանապարհն՝ մեծ գոտարութիւնք են հասարակաց այգ. բնութեան գեղեցիկ անկիւնը յաճախելու և վայելելու: Սուտաղ իր գեղեցիկ դիրքով շատ վար չի մնար Զուիցերիէն:

Քիչուոր են անդ Եւրոպացիք. Սուտաղի բնութեան գեղեցկութենէն և առողջարար խաղողով կը շահուին միայն տեղացի թաթարք կամ թաթք. որոց վրայ յայտնի կ'երևայ՝ թէ ինչպէս լեռնային օդը՝ նոյն և առողջարար խաղողը մեծապէս օգտակար եղած է իրենց: Սակաւաթիւ են Սուտաղաբնակ Հայկազունք, միայն այդէկուլթի միջոց այլ և այլ քաղաքներէ կը ժողովին հոն՝ գինի ծախելու կամ գնելու համար:

Իսկ Սուտաղի թաթարաց կամ թաթից՝ կենդանի, առայդ և ուղղադիր տիպարը, ծերունեացն, ևս ապա երիտասարդաց վայելակազմ իրանը, նոյն և կարմրայտ երեսները, իսկոյն՝ առաջին նայուածքի՝ կը վկայեն Էւրոպացի ճանապարհորդին թէ դոքա յիրաւի որդիք են գեղեցիկ բնութեան, և խաղողըն յոյժ շահաբեր է իրենց։ Հանգուցեալն իրաւթաւ Տօրէշատ պիտի զըտնար հոն վսեմ տիպարներ Արազամուհամար, և այլ շատ Յովսէփ-Գեղեցիկներու համար, եթէ պէտք լինէին նմա՝ նորոյ Ս. Գրոց պատմութիւնը պատկերազարդել։ Շատ անգամ պատահած է Սուտաղ ժուռ եկած միջոցիս՝ յաւանդել կամս կանգ առնուլ, և հաճութեամբ դիտել երկուսարդ ձիաւոր թաթարին վրայ, որ կարչնեղ լեռնագնաց ձիուն շալակը հծած, չիփ-չիտակ, ըստ գրաբառ բացատրութեան՝ իբրեւ մոմ՝ աշտանակի վրայ, վայելապէս կարշաւէ Սուտաղի հովտին մէջ։

Յետ վաղեմի Տարիացւոց, Կիմերացւոց, Սկիւթացւոց և ապա Ալանաց և Հոնից, Խաղարաց և այլոց բազմաց, առաջին քաղաքակիրթ ժողովուրդք Սուտաղի՝ եղած են Յոյն գաղթականք, որք զբաղած են երկրագործութեամբ, և ծովային վաճառականութեամբ։ Իբրիստոնէութեան ութերորդ դարուն իրենց եպիսկոպոսանիստ քաղաք եղած է Սուտաղ. իսկ ի ժ. դարու երեքեր են Հայկազունք Սուտաղի սարերուն վրայ։ Յայտնի է որ Յոյներն շատ սիրած են զՍուտաղ, մինչև անգամ ի վնաս հայրենի կրօնից և ազգային ոգւոյ։ Աւանդութեամբ գիտեմք՝ որ այժմեան թաթար բնակիչք Սուտաղի և երկու թաւաք — Դաշ գիւղերուն՝ սերունդք են գեղեցիկն ելլաղայ։

Գննուալիք ևս մեծ նշանակութիւն

տուած են Սուտաղի. որոյ վկայ ցարդ կեցած են նոցա մեծամեծ շինութիւնքն, ինչպէս եռայարկ բերդն, վայելչադիրտակ աշտարակք, և հակապարծ չրամբարք, և այլն։

Նոյա տիրապետութեան միջոց՝ հարիւր տասը տարի, 1365 — 1475, Սուտաղ իւր դրացի Կաֆայի հետ (որ այժմ հնազոյն անուամբ դարձեալ Թէսդոսիա կը կոչուի) մէկ տեղ՝ ձևացուցած են կեդրոնատեղի վաճառակաւութեան ընդ մէջ արեւելից և արեմբ. տից։ Սուտաղի բերդը՝ ուր կը կենար դօրաց խումբ մի պահակապան, իւր բերդակալ գեներալացի իշխանով, ծառայած է իբրեւ ամուր ամբարանոց բազմատեսակ վաճառներու, զոր հեռաւոր աշխարհներէ կը բերէին Գենուացւոց նաւերն։

Իբրեւ վաճառատեղի՝ մեծապէս շահաւոր դտել են Գենուացիք զՍուտաղ. սակայն և այնպէս միշտ հաւատարիմ մնացել են կրօնից հայրենեաց և ազգային աւանդութեանց. վասն զի երբ օտար ձեռք մերձեցել են նոցա կրօնական սրբաւորեցեաց, նոքա ընդդէմ ախոյեան կանգնած են իսկոյն. հազարներով ընկած են իրենց եկեղեցեաց պարսպաց ներքեւ², սուր ի ձեռին պաշտպանելով զնոսա ընդդէմ Մալիմալացի . և ողջ ապրեալքն ստիպեալք ի բազմաթիւ թըշնամոյն, չուած են ի Գենուա, յիրաւի կողոպտեալք և հարստահարեալք, այլ ոչ ամօթապարտ ուրացեալք։ Այն հին սրբատեղեաց մէկուն քով, թերևս ճիշդանոր՝ որոյ համար կը գրէ Ռոննելվելի, թէ Թուրքաց Սուտաղի տիրելուն միջոց 1475 ին ներկրաւ է գեներալացի արեւմտ, 1483 ին, հոկտ. 2 ին³ ժողոված էր մեծ բազմութիւն ուխտաւորաց։ Սրբավայրս կամ եկեղեցիս կանդնուած է՝ ծովուն վրայ սեպացեալ մի

1 Թաթ կը կոչուին Ղրիմու հարաւային փանջ վրայ մահմաական կրօնիւ՝ ընակող ժողովուրդն. սոցա լեզուն Թաթարերէնի մի տեսակն է. աւանդութիւնը կը վկայէ որ սոցա սերունդք են Թաթարաց հայածանաց միջոց՝ ուրացեալ Յոյներուն։

2 Պատմութիւն Թաթարաց Մարաինոսի Ռոննելվելի, Լատներէն գրուած. Tartaria, Martini Broniovi.

3 Ի հոկտ. 2, տարուէ տարի կը կատարուի ամեն օծման եկեղեցւոյս, իսկ ի 23 օգոստ. ամեն Պաշտպանութեան կուսին։

լերան ծայրը, հին Սողոմոն¹ աւերակաց մէջ. որոյ չորս կողմը ցարդ կ'ամբառնան բարձրագիտակ և վայելչագեղ աշտարակը Գննուացւոց, գոթացի արձանագրութեամբ, *Spectabilis et Potentis viris* (անուանի և մեծազոր առն) . *Comitis et honorabilis consulis* (կոմսի և պատուական հիւպատի) և այլն, և այլն : Աշտարակներս առանց իսկ այդ արձանագրութեանց՝ ինքնին բարձրաբարբառ կը քարոզեն իննոցաց ճարտարութիւնը և մեծագործութիւնը : Սրբաաւելոյն կամ տաճարին շէնքը մանեկաձև գմբէթին ներքև, կ'իսակործան դաւթովճակատին՝ յարեւից, և սևացեալ պատերով, յանձրեւոյ և ի խառնակութենէ օգոց, ունի խիստ կերպարանք և կնիք բազմազարեան հնութեան :

Առաւօտեան ժամը 10ին, շէնքիս առաջը կախուած զանգիկը, շէն շէն հնչելով, ուխտաւորաց իմաց կու տար որ զան ժողովին : Տաճարին սրբազործութեան հանգէսը կատարուեցաւ բազմախառն ժողովրդոց զիմաց, պարկեշտ և ջերմ. ունդն արարողութեամբ. մի քահանայով և քանի մի տիրացուներով : Թէպէտ և պաշտամունքն հաղիւ երկու ժամ տևեց, այլ համարձակ կարելի է ասել, որ առ հասարակ ամենայն հանդիսականաց մեծ հաճութիւն պատճառեց : Պատճառը յայտնի էր. զի այն բազմազարեան Աստուծոյ տունն, որ չորս ամիս առաջ՝ աւերակաց կոյտ մի կ'երևար, այժմ գոնէ ներսի կողմէն կը վայլէր մտքորթեամբ և աղբատին՝ այլ պատշաճաւոր սպասուք :

Հետաքրքրական է տաճարիս պատմութիւնը գիտնական անձանց բերնէն լսելու . վասն զի այս խորհրդաւոր և ինքնագաղտիար շէնքս՝ ստիպած է այլ և այլ ուսումնական անձինս իւր վրայ մասնաւոր ուշադրութիւն դարձնելու :

Մի գրաւոր, յիշատակարան ի հնուց մնացած այս շէնքիս մասին, կայ ցարդ

խորանին քանդակեալ քարերուն բաւաւորին վրայ, լատին լեզուով և գոթացի գրերով համառօտ վերտառութիւն մի, զոր առաջին անգամ, 1861ին կարգաց մեծարգոյ ուսուցիչ Վ. Իւրգելի, որ և այժմ տեղակալ նախագահ է Օսեսայի կայսերական հնագէտ ընկերութեան : Ահաւասիկ բնագիրը.

« In Christi nomine. amen. 1423. die 4 Januarii (hoc)² opus fecit fieri Dominus R. Catalanus.

Christus custodiat » .

Թարգմանութիւն .

« Ծանուն Բրիստոսի, ամէն . 1423 ամին, ի 4 աւուր յանուարի՝ (զայս) գործ ետ առնել տէր Ռ. Կատալանոս .

Բրիստոս պահեսցէ » :

Այսպէս կը ստորագրէ Վ. Իւրգելի տաճարը . — « Եկեղեցին ըստ բաւական » նին ընդարձակ է. անտարակոյս՝ Բրոնէսքիի յիշած եկեղեցիներէն է առ . « ունի կաթուղիկէ որ ցարդ լաւ վիճակի » մէջ է, այլ չունի երգիք, մոտից գա . « Էիթը կործանած է : Գովի կիսակոր . « ծան մնիրայէն, հաւանական կ'երևի » մեզ՝ որ Թուրքք՝ զսա ի մղկիթ փո . « խած լինին . որ և պատճառ կը համարիմք ցարդ անկործան մնալուն »³ :

Այս կարծիքէն է Հ. Մինաս Բժըկեան վարդապետը, որ 1828ին ճանապարհորդելով այս կողմերս՝ մանրամասն քննութիւններ ըրել է Գննուացի և Հայ իշխատակարանաց վրայ, և տպագրել իւր ի Նհաստան ճանապարհորդութեան մէջ . « Եկեղեցին բեր . « ղին յարեւելեան կողմն, է բոլորովին » քարաշէն, բայց զկամար դաւթին և « զանգակատան՝ քանդեալ են թա . « թարք : Տեսաք ի հարաւին կողմն վայր » միւրապի . յորմէ յայտ է թէ թա . « թարք ի մղկիթ փոխեալ էին, և այժմ » է եկեղեցի Ռուսաց » :

¹ Գննուացի յիշատակարանք Soldaya կը գրեն, ազգային ձեռագիրք Սուղգա կանուանեն զԱւուստի :

² Միհրապիւն վերի քարին վրայ կը կարդա .

ցուի ցարդ այս յիշատակարանս . (զայս) բառը չկայ հոն :

³ Յիշատակարանք Օսեսայի հնագէտ ընկերութեան հատոր Ա :

լատիններէն յիշատակարանին զօրու-
թեամբ « զայս գործ ետ առնել » , և
բժշկեան վարդապետին այս կարծեօք ,
պէտք է հասկընալ այս շէնքս շինուած
է սկզբան՝ իւր կաթողիկոսաց եկեղեցի .
այն է՝ Գեներալքի շինել են զայն 1423
ին . Թուրքք Խորեզմշահ Սուտաղի 1475ին ,
փոխած են 'ի մզկիթ . ապա և Ռուսք
իրենց կարգին՝ 1783ին տիրելով Սու-
տաղի և միացնելով իրենց աէրու-
թեան հետ , դարձեալ յեկեղեցի փո-
խել են մզկիթը :

Սակոյն բազմահմուտ և հնագէտ
Զուիցերացի ճանապարհորդն Dubois de
Montpéroux (Տիւպօս տը Մօնփէրէօ)
որ շրջած է այս կողմերս 1832 — 1834 ,
իւր գիտնական հետազօտութեամբ ըզ-
կարդացողը բոլորովին յայլ միտս կը
փոխէ . ինձ այնպէս կ'երևի՝ որ անկա-
րելի է չհաւանիլ նորա պատճառաբա-
նութեանց :

Այս հարկ է գիտնալ՝ որ նա չէ կարո-
ղացած կարդալու խորանին վրայի լա-
տին յիշատակարանը , վասն զի կրով
ծնփուտ է եղել նոյն միջոց . սակայն
նորա փաստերուն առաջ՝ յիշատակա-
րանին իմաստն ևս կ'այլայլի . նա՝ չէ
կարդացած գոթացի երկտող վերտա-
ռութիւնը , այլ նոյն իսկ շէնքին վրայ
կը կարդայ նորա պատմութիւնը : Եթէ
կարդացած ևս լինէր , ըստ իմ կարծեաց ,
դարձեալ հարկ էր որ հաստատ մնայր
իւր կարծեաց վրայ : Զի յիշատակարա-
նին այս խօսքը « զայս գործ ետ առ-
նել » ոչ ամբողջ շէնքին համար , այլ
մի մասին համար կրնայ իմացուիլ ,
ինչպէս խորանին : Կարծեմ սխալ ևս չի
լինիր եթէ այսպէս թարգմանեմք յիշա-
տակարանին այն խօսքը « զայս վերա-
նորոգութիւն ետ առնել » . այսինքն
զմզկիթը՝ յեկեղեցի փոխել : Թողումք
որ հեղինակն ինքն խօսի .

« Այլ ևս այս տեղուանք ուշանալու
» ինձ համբերութիւն կը պակասի . այ-

» գետց մէջէն՝ կը տեսնամ հեռուն՝
» խորհրդաւոր շէնք մի , և կը փութամ
» երթալ զայն տեսնալու : Որպէս զի
» քովը հասնիմ՝ հարկ է ինձ բերդին
» պարսպին երկայնութեամբ քայլել .
» լուսննրսի կողմէն , մինչև ցհիւսիսա-
» յին—արեւելեան աշտարակը՝ ուր որ
» պարիսպը սրանկիւն ձևացընելով , կը
» հասնի այն սեպածէ ժայռին ծայրը ,
» որոյ ստորոտը Ան ծովուն ալիքը կը
» լուան : Հոն՝ անդունդներու վրայ կան-
» դուն կեցած է այդ շէնքը , դժուար է
» որոշելը թէ ինչ է այն . զի իւր վերայ
» կը կրէ կնիք այլ և այլ ճարտարապե-
» տական ոճերու և զանազան կրօնա-
» կան պաշտամանց :

» Ա՛ք գիտեմք՝ որ Սուտաղ յԷ դա-
» ըն՝ ունեցել է իւր եպիսկոպոսները ,
» որոց շարքը ամբողջացընելու աշխա-
» տած է Քէօփիէն ¹ . Մինչև ց 1204 ,
» այդ քաղսքը Յունաց կայսրութեան
» ներքոյ եղած է , ունենալով իրեն հա-
» մար առանձին նախարարներ , զորս
» կոտորելով խրփաղ թաթարք՝ զՍուղ-
» դէա ² իրենց մայրաքաղաք կ'ընեն ,
» այն միջոց ժամանակին՝ Սուտաղի
» ծաղկեալ ատենն է : Խրփաղաց ինք-
» նակալութիւնը կործանելով՝ Մոնղոլ
» թաթարք 1237 ամին , Սուտաղ դար-
» ձեալ քրիստոնէից քաղաք կը լինի :
» Երբ 1253ին Ռիւբրիւք ³ հասաւ հոն ,
» Սուտաղ Ղրիմու գլխաւոր քաղաքը կը
» համարուէր , և կը վճարէր թաթարաց
» Պադու Ղանին հարկ . այլ ունէր ա-
» ռանձին իրեն կառավարիչ նախարար
» և եպիսկոպոս , որ մայր եկեղեցւոյն
» մօտ հիւրընկալից գոթիւբրիւք ⁴ :

» Ժ. Գ. դարուն սկիզբները Մոնղոլ թա-
» թարք 'ի կրօնամիտութենէ գրգռուած ,
» վարած են զքրիստոնէայս 'ի Սուտա-
» դէ , փոխելով նոցա եկեղեցիներն 'ի
» մզկիթ : Այն պատճառաւ 1323ին
» Սրբազան քահանայապետն Հովմայ
» Յովհան ԻԲ , թաթարաց իւզբէկ խա-

¹ Ժողովածու Ղրիմու յիշատակարանաց , էջ
129 և հետեորդք :

² Յոյք այդ անունը տուած են Սուտաղի :

³ Rubraquis Գալլիացի երկտասարգ քարո-

ղիւ , զրկուած է 'ի Ղրիմ Ս . Լուգովիկոս թագա-
ւորէն , Ժ. Գ. դարու երկրորդ կիսոյն մէջ , թաթա-
րաց Խզգին Քրիստոսի աւետարանը քարոզելու :

⁴ Bergeron , Collection . էջ 3 :

» նին խնդրադիր մի կը դրէ, որ թողու
» վերստին բնակելու 'ի Սուտաղ սքստ,
» բնալ քրիստոնէից, և զանգակաց գորւ
» ծածուկեան արգելք չլինի. և որով
» դարձեալ քրիստոնէաբնակ քաղաք
» կը լինի Սուտաղ: Աստի կարելի է հե-
» տեցընել, որ թաթարացի խանութիւ-
» նըն, Ղրիմու մէջ ունէր իւր որոշեալ
» սահմանը, և Սուտաղիք կը վճարէին
» նոցա որոշեալ հարկ մի:

» Ուրեմն ոչ 'ի թաթարաց աւին Գե-
» նուացիք զՍուղայա, 18 յունիսի 1365
» ին, այլ 'ի Յունաց, որոց համար կը
» դրէ Բրոննաքի, թէ զսուղ և անմիա-
» բանք ոմանք եղած են: Գենուացիք
» զՍուղայա նուաճելուն պէս՝ իսկոյն
» ձեռք կը դարնեն եռայարկ Բերդին շի-
» նութեան և տակաւ կը շինեն, նախ՝
» վարի յարկը, յորում էին երեք մե-
» ծամեծ կաթուղիկէ եկեղեցիք (Tem-
» pla tria maxima catholica. Bronio-
» vius). ապա միջին յարկը, հուսկ յե-
» տոյ՝ վերինը. բերդին աշտարակնե-
» րը զատկատ վերտառութեամբ իրենց
» շինութեանը և թուականով:

» Թուրքերն տիրապետելով Ղրիմու
» 1475ին, Սուտաղի բերդը նախկին
» դրից մէջ թողով 'ի մզկիթ կը փո-
» խեն եկեղեցիքը. այլ բերդիս պա-
» հապան զօրքը ոչ թաթարաց իշխա-
» նութեան կը հնազանդի, այլ Օսմա-
» նեան Պետութեան հետ անմիջական
» յարաբերութիւն կ'ունենայ. այսու
» պատճառաւ, երբեմն, նոյն և քիչ ա-
» ռաջ՝ վաճառականութեամբ ծաղ-
» կեալն Սուտաղ, բոլորովին կ'անջքա-
» նայ և համարեալ թէ 'ի մուսուղութեան
» կը թաղուի: Յետ հաղարաման պա-
» տերազմին՝ սատ կարելի է գտնալ
» կանդուն այս տաճարս միայն:

» Հաւանական է որ սա Բրոննաքիի
» յիշած երեք եկեղեցեաց մին է. այլ
» ո՞վ կրնայ զմեզ համոզելու՝ որ այս
» այն ժողովրդական եկեղեցին է, որոյ
» մօտը 1253ին բնակեցաւ Ռիւբրիւք,
» և որ արդէն յՐ դարուն շինուած էր:

» Սա այնպիսի մի խառնուրդ է եկեղե-
» ցւոյ և մզկիթի, որ շատ դժուար է որո-
» շելը՝ թէ որք քան զմիւսը յառաջիկ
» է: Այլ տհաւաստիկ պատճառները՝
» որ զիս գէպ յերկրորդը կը հակեն:

» Նախ և առաջ շէնքին գիրքը մզկիթի
» է. միւրապը գոգաձև, և յորում ա-
» պա յարմարացուած է սեղանը. հա-
» բաւային կողմն է, որ չէ կարելի յոյն
» եկեղեցեաց մէջ, ուր խորանը հարկ է
» որ արևելեան կողմն լինի. ուրեմն այս
» շէնքը իբրև Յունաց եկեղեցի կարելի
» չէ համարել: Երկրորդ՝ իսկոյն աչքի
» կը զարնէ Ղրիմու նախնական մզկիթ-
» ներուն տիպարը, ինչպէս որ է Բա-
» բա — կէօղինը¹, որոյ վրայ արդէն խօ-
» սած եմ:

» Շէնքիս առաջին մասը՝ նաև ինչպէս
» Ղրիմու ամէն հին մզկիթներուն, կը
» ներկայացընէ մեզ կամարակապ գա-
» լիթ մի, որ կը համապատասխանէ ժ-
» դարու եկեղեցեաց վերնատանց: Այդ
» գաւիթը ձգուած է ընդ լայնութիւն
» շէնքիս. կաթուղիկէն կը բաժնուի
» սա՝ արևելեան լայն կամարներով,
» զորս 'ի վեր կ'ամբառնան երկու քա-
» ռական սիւններ և այլ ևս երկու (որ-
» մնամէջ) կիսասիւններ, որք ինն ուրք
» բարձրութիւն ունին խոյակներով և
» խարիոխներով մէկ տեղ առած: Իսկ
» այս գաւիթը կը լուսաւորեն՝ երկու
» կարգ մէջ ընդ մէջ քառակուսի պա-
» տուհաններ: Ամենայն ինչ աստ թա-
» թարական է, որք չեն յիշեցընել ոչ
» Յունաց խաչաձև եկեղեցեաց վերնա-
» տունները և ոչ Գենուացւոց հանճա-
» րը, որ անշուշտ փոխան վեր յիշեալ
» քառակուսի պատուհաններուն, կը
» բանար հոն Գոթմացի դեղեցկաչէն
» լուսամուտներ:

» Հուսկ յետոյ մանեկաձև կաթողի-
» կէն, իւր գմբէթայարդներով, քան-
» զակազարդք՝ միւրապին չորս քով,
» սեանց խարիսխները, ամենայն ինչ,
» մոնդոլ — արևելեան ոճով շինուած են
» և ոչ Գենուացի: Ինձ այնպէս կ'երևի

¹ Այդ յիշեալ Բարա-կէօղն՝ երբեմն թա-

թարաց գիւղ էր, 17 վերստ հեռի 'ի Թէոդոսիոյ:

» որ չեմ սխալիր՝ եթէ հաշուեմ այս
» մզկըթիս շինութիւնը այն ժամանա-
» կամիջոցին, յորում՝ կրօնամու թա-
» թարք վարեցին գերիստոնեայ Յոյնս՝ի
» Սուտաղէ, յի դարուն սկիզբները :
» Այլք՝ որպէս զի շուտով ասեմ ու պըր-
» ծին, թուրքաց շէնք կը համարին մըզ-
» կիթս, շինուած՝ յետ նուաճելոյ նոցա
» զԳենուացիս 1475ին. սակայն այդ
» ենթադրութեամբ՝ չէ կարելի մեկ-
» նել՝ որ ինչ Գենուացի է՝ի մզկըթիս :
» Յայտնի կը տեսնուի որ միհրապը իւր
» արեւելեան վարդաձև և առաջնաձև
» զարդերով Գենուացիք՝ի խորան փո-
» խած են, զոր կը հաստատէ խորաքան.
» դակ գոթացի յիշատակարանը միհ-
» ռապիւն վերայ, որոյ թուականը ինձ
» անհնարին եղաւ կարդալու, հաստ
» բռածեփով ծածկուած լինելուն պատ-
» ճառաւ . . . » :

« Ենթին արեւելեան պատին վրայ
» երկու պատուհաններ կը բացուին ճա-
» կատին կամարաց մէջ. այս կամար-
» ներն՝ ընդ երկայնութիւն շէնքիս ձը-
» գուած են դրսի կողմէն. լուսամուտ-
» ներուն շրջանակայ վրայի քանդա-
» կադործ զարդերը մեծ նմանութիւն
» ունին Հայաստանի ¹ և վրաց աշխար-
» հին խորաքանդակներուն : Պատու-
» հաններէն մէկուն վրայ՝ Գենուա — Գո-
» թացի յիշատակարան մի կայ՝ եր-
» կու տող, որ մեծաւ մասամբ ջնջուած
» է, միայն առաջին տողին վերջի բա-
» ոը կարելի է կարդալ edeo, նոյնպէս
» և երկրորդին՝ Soldaya : Ի վերջոյ
» տաճարիս մուտքին քով (քարի վրայ)

1 Տիւալա նմանութիւն կը գտնէ Սուտա-
ղէ այժմեան Աստուածամօր պաշտպանութեան
եկեղեցւոյն պատուհանաց քանդակներուն և
Հայաստանի, այսինքն Անեղ աւերակաց՝ քանդա-
կազարդերուն մէջ. այլ աւելի հայկական քան-
դակաց ծանօթ աչք, որ միայն նմանութիւն, այլ
գրեթէ նոյնութիւն կը գտնեն : Եթէ համա-
ձայնիմք, և լիայ պատճառ չհամաձայնելու հե-
ղինակիս հետ՝ որ այս շէնքը շինուած է յի գա-
րու առաջին կիսոյն մէջ, առանց պատմութեան
դէմ մեղանշելու՝ կրնամք զորոյցել՝ որ այդ լու-
սամուտներուն քանդակազարդք՝ հայ քարա-
կոփներուն քորցը գործն է. չափ հաւանական է՝
որ նոյն գործաւորք, որք իրենց փառազարդ Ա.

» կարդացի մի այլ Գենուացի յիշատա-
» կարան. այս քարին ոչ ուստի՝ բերուի-
» լը և ոչ որոյ հոն դնելը չգիտեմ : 1450
» die prima junii tpre (tempore) re-
» giminis egrigii viri dni (domini) Be-
» nedicti de . . . Consilis et Castellani
» Sol . . . մականունը և վահանադրոշ-
» մը կամաւ եղած էին » :

« Ահա փաստերը՝ որք կը հաստա-
» տեն թէ Գենուացիք փոխած են այդ
» մզկըթը իրենց եկեղեցի, թերևս և՛ի
» մայր եկեղեցի. հաւանական է՝ այս
» այն եկեղեցին լինի, որոյ պաշտպա-
» նութեան համար հազարէն աւելի
» Գենուացիք ընկան մեռան՝ թուրքաց
» Սուտաղի տիրելուն միջոց : թուրք
» ջնջած են տաճարիս մէջ այն ամե-
» նայն՝ որ յիշեցուցել է գերիստոնէու-
» թիւն, մինչև որ եկել են Ռուք կա-
» տարելու իրենց պաշտամունքը, այդ
» ձեռքէ ձեռք անցած տաճարին մէջ :
» Այսպէս ուրեմն հինգ կերպարանա-
» փոխութիւն ունի տաճարիս պատմու-
» թիւնը :

Ա. Մզկըթ Մոնգոլ — թաթարաց .
Բ. Եկեղեցի Յունաց քրիստոնէից .
Գ. Կաթողիկէ եկեղեցի Գենուա-
ցւոց .

Դ. Մզկըթ թուրքաց .
Ե. Եկեղեցի յունադաւան Ռուսաց :
Ա. Ժամ՝ Զ. Եկեղեցի Հայոց կաթողի-
կաց. որոյ սրբագործութեան հանդէսը
կատարուեցաւ 2 հոկտեմբեր 1883 : Աս-
տուած տալի որ այս վեցերորդ կերպա-
րանափոխութիւնը առաջին հինգ փո-
փոխութեանց վախճանը չունենար, այլ

նին քանդակներով լցուցած են, սառ ևս ՚ի Սու-
տաղ բանեցուցել են երկամ գրեմին, իրենց
տանը քանդող թաթարաց մզկըթը զարդարե-
լու : Իկրաւոր Անեղուց գաղթը ՚ի՝ Լրիմ եղած է
1330ին : Աւաղ Անեցի նազալ քանդակողաց . . .
զի մինչդեռ այդ ապաւեր սարին ծայրը աշխատած
են այդ թաթարաշէն մզկըթը զարդարելու, ոչ
անգամ կարացել են մոքերնէն անցնել՝ որ այն
օրէն 553 տարի երբ, իրենց սերունդն ցերեցան
Տաւրիսացոյ շախրհին մէջ. դարձեալ պիտի
ժողովին այդ իրենց կոփած զարդարած մզկըթին
մէջ. և զայն յեկեղեցի սրբելով՝ իրենց Լուսա-
նորին լեզուով և բառերով, պիտի փառաբանեն
Մայր սուրբ Եւթիմիոսէն երգելով :

ընդ երկար տարիներ՝ այս բաղմամբ, բնան սրբավայրը լինէր տեղի շերմեւումնդն աղօթից 'ի պատիւ և 'ի փառս միոյն Աստուծոյ, ընդ հովանաւորութեամբ երկնից Թաւադնայի Պաշտպան — Տիրամօր Մարիամու կուսին:

Պարտք կը համարիմ աստ՝ մեծաւ շնորհակալութեամբ յիշել զանուն մեծարգոյ Նիկոլայ Մուրզաքեչի (հանգուցելոյ 16 հոկտ. 1883) փոխսնախադահի Օտեկայի կայսերական հնախոյզ ընկերութեան. զի նորա առաջարկութեամբ ձեռք զարնուած է բարի գործիս. գտնուեցան և ինքնայորդոր նուիրատուք, որովք գլխաւորեցաւ գործս: Թոճարակամ՝ նուիրատուաց մէջ առաջին տեղին գրաւած է իրտւամբ Բարձրապատիւ ուսուցիչ Պետրբուրգի գեղարուեստից ակադեմիային Պ. Ղեւոնդակոտից. զի աւագ խորանին մեծագին պատկերը, որ կը ներկայացնէ զՄայրն Յաւազին՝ նորա ճարտար վրձնոյն արդիւնք է, ձրիաբար նուիրած տաճարիս, հանդերձ փառաւոր շրջանակով, որ մեծ չքեղութիւն կու տայ տաճարիս, և է առարկայ շերմեւումնութեան համընդուն յիշատարաց: Սորամէ վերջը յիշատակութեան արժանաւոր է բարեպաշտիկ Հայկազն Տիկիկն Աննա Չէսթնովիչ (Չամուրճեան) իւր առատաձեռն տուրքերով և յաճախ ուխտագնացութեամբ, որոց հետ՝ 'ի սրտէ շնորհակալութիւն համընդուն ձեռնտուաց և զարդարողաց Սուրբ Տաճարիս *:

Հ. ԲԵՐՈՒՄԷՎ. Վ. ԲՈՒՆԵՆԵԱՆ

* Այս հատուածս թարգմանուած է ռուս լեզուէն. որ պարսիկ ձեռք տպուած է 'ի Յէր. Գոսիա (1885), և ինդոլոգ կրնան ստանալ 'ի Սուրաթ, Աստուածամօր տաճարիս մօտ. ռուս լեզուով գրուելուն պատճառը այն եղած է, որ:

պէս զի առհասարակ աճէն ազգէ ուխտաւորաց հետաքրքրութիւնը գոհ լինի, իմանալով այդ բաղմամբ բնան Տաճարին և այժմ Պաշտպան — Աստուածամօր ուխտատեղւոյն ստուգալէպ և մանրամասն պատմութիւնը:

Դ Ր Ո Ւ Ա Փ

Ի ՍՈՒՐԲՆ ՆԻ Ի ՍԻՐԵԼԻ ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՒՆԱՅԻ

(ՏԵՍ Լուսոր ԽԳ. էջ 351):

Այլ արդ՝ այսնիւթական ստացուածքին բազմազան նկարուց և տառից գեղեցկութենէն՝ վերանայով մտքը 'ի գերանիւթն, այսինքն 'ի հանճար և 'ի հոգի ստացողին՝ դրանչացած կը հիանանք մեր եկեղեցւոյ, դպրութեան և բովանդակ յիշատակաց յաստուածուատ պարգեւեալ գանձին՝ Ներսիսի վրայ, որ յատկապէս ԼԱՄԲՐՈՒՆԱՅԻ կը կոչուի, ինչպէս իր անուանակից հաւեղբայրն՝ ԿԼԱՅԵՑԻ. վեհագոյն զոյգ մը այն երկուսնմատոյց ամբողջաց մէջ բնակող ա. մէն անձերէն. որք թէպէտ և բոլորովին քանդին և աւերին իսկ, այս զոյգ ան.

մահից յիշատակաւ անմոռաց պիտի մընան իրենց անուանքն անդամ՝ պատմութեան էջերուն մէջ: Յետ Գրիգորեանց և Սահակեանց՝ Ելայեցին կաթողիկոսական դահոյն կը հաւասարի իրենց, իսկ Լամբրուանցին իր եպիսկոպոսութեամբ ընթան զամենը կը գերազանցէ, գէթ Կիլիկիոյ հարստութեան եպիսկոպոսաց մէջ. և իրմէ ետքը՝ չկայ հաւասար և կամ իրեն մերձաւոր որ. գուցէ և բովանդակ Հայաստանեայց մէջ իսկ՝ ոչ դը հաւասարի Ներսիսի՝ պարակցութեամբ բաղմամբայի շնորհափայլութեանց և արդեանց՝ այնքան կարճատե կենաց սահ.

1 Իր ընտանեգոյն և խորագոյն ծանօթ ձեռնառն թաւառուր սպասուորը կը համարձակի երգնուել Աստուած, Թէ անկէց վերը՝ ով ալ

գայ՝ չի կրնար Ներսիսի հաւասարել. և մինչև ցարդ՝ Կարգարանայ ըստն. « Աստուած... Որ ով լինի՝ զերթ զերթ չլինի »: